

Երաժշտագետ-ֆոլկլորագետ,
Երևանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիայի դոցենտ
E-mail: anki.mus@mail.ru
Doi:10.58580/18290019-2022.1.62-24

«Երաժշտական Հայաստան» ամսագրի խմբագրական խորհրդի
երաշխավորությամբ՝ Ալինա Աշոտի Փահլևանյանի՝ 3.10.2022 թ.,
ընդունվել է տպագրության՝ 1.10.2022 թ.,
ներկայացրել է հեղինակը՝ 20.9.2022 թ.

Հայ երաժշտական ֆոլկլորագիտության նվաճումների շուրջ

Անվտիմում

Հոդվածը՝ հայոց իրականության մեջ, XIX-XXI դարերի ընթացքում, հայ ժողովրդական երգ ու նվագի գրառման, պահպանման և հրատարակման գործընթացի զարգացումը ներկայացնող ակնարկ է՝ որակական, տեխնիկական և գիտական ակնհայտ առաջընթացով հանդերձ:

Բանալի-բաներ. Կոմիտաս, հայ ժողովրդական երգ ու նվագ, ձեռագիր և տպագիր երգարան, ձայնագրյալ ժողովածու, «ֆոլկլոր-բանասաց-բանահավաք-ժողովածու» օղակ, ֆոլկլորագիտություն, երաժշտական բանահավաքություն, Անահիտ Կիրակոսյան

Abstract

Musicologist-folklorist, Associate Professor at YSC **Anahit Artavazd Kirakosyan**. - "On the Achievements of Armenian Musical Folklore".

The article provides an overview of the evolution of the process of documenting, preserving, and publishing Armenian folk songs and music from the 19th to the 21st centuries, with qualitative, technical and scientific advancements in the Armenian reality.

Key Words: Komitas, Armenian traditional song and music, handwritten and printed songbooks, collection of decoded samples, sequence "folklore - narrator - ethnographer - collection", Folklore Studies, music ethnography, Anahit Kirakosyan.

Абстракт

Музыковед-фольклорист, доцент ЕГК **Анаит Артаваздовна Киракосян**. - "О достижениях армянской музыкальной фольклористики".

Статья представляет собой обзор развития процесса записи, сохранения и издания армянских народных песен и музыки в течение XIX-XXI веков наряду с качественным техническим и научным прогрессом.

Ключевые слова: Комитас, армянская народная песня и танец, рукописные и печатные песенники, сборники расшифровок, "фольклор-сказитель-этнограф-сборник", фольклористика, музыкальная этнография, Анаит Киракосян.

1970-ականներին, երբ սովորում էի Երևանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիայում և անհրաժեշտության դեպքում օգտվում էի ֆոլկլորագիտության ամբիոնի փոքրիկ, բայց հարուստ գրադարանից, որն այն ժամանակ կոչվում էր «Հայ ժողովրդական երաժշտական ստեղծագործության կաբինետ», ակամայից տեղեկանում էի նաև կաբինետի նոր հրատարակությունների մասին: Այն ժամանակ դրանք հաստ ու կենտ էին, սակայն այսօր, դրանց մեջ մեծ քանակ են կազմում ժողովրդական երգ ու նվագների ձայնագրյալ ժողովածուները, նաև մատենաշարի տեսքով:

Դրանց ստեղծումն սկսվում է մեծ մասամբ այս կամ այն շրջանում կամ գյուղում կատարվող բանահավաքչական աշխատանքով և ավարտվում տպարանում: Բսկ վերջիններիս արանքում ժողովածուի ստեղծմանը նախորդում է երկար և տքնաջան ստեղծագործական և արխիվային աշխատանք, որին մասնակից են լինում երաժշտագետներ, ֆոլկլորագետներ, բանագետներ, ազգագրագետներ, կոմպոզիտորներ, երգիչներ, աշուղագետներ և մշակույթի այլ նվիրյալներ:

Բնձ ևս հաջողվել է մասնակցել ամբիոնի կողմից կազմակերպված ժողովրդական երգի հավաքագրման ուսանողական գիտարշավներից մեկին, իսկ հետագայում՝

ինքնուրույն գիտարշավներ են ունեցել Հայաստանի տարբեր շրջաններում, որոնց ընթացքում առավել հասկանալի ու հարազատ է դարձել այն գործընթացը, որի արդյունքում գիտության սեղանին են դրվում բազմաթիվ ձայնագրյալ ժողովածուներ. հենց դրանց մասին էլ կփորձեն շարադրել դիտարկումներս սույն հոդվածի շրջանակներում:

Հասկանալի է, որ ամբողջությամբ ընդգրկել այն ամենն, ինչ հրատարակվել է վերջին 170-ից ավելի տարիների ընթացքում՝ անհնար է: Դա մեկ անհատի գործունեության և, առավել ևս, մեկ հոդվածի սահմաններից դուրս է: Այնուամենայնիվ, անդրադառնալով հնարավորինս շատ ժողովածուների՝ կփորձենք մեր համեստ գնահատանքն ուղղել նաև այն նվիրյալ անհատներին, ովքեր այս կամ այն կերպ իրենց դերն են ունեցել այդ ազգանվեր գործում:

Ժողովածուների ուսումնասիրությունը ընդհանուր առմամբ նպաստում է ֆոլկլորի մասնագետների ուշադրության կենտրոնում պահելու ֆոլկլոր-բանասաց-բանահավաք-ժողովածու կարևոր օղակը, որն ըստ իս ֆոլկլորագիտության առանցքային դրույթներից է: Ուսումնասիրելով այն, հնարավոր է ամբողջացնել ժողովրդական երգի մասին գիտությունը, որը, հասկանալիորեն, մի քանի սերունդների անելիք է: Բնականաբար, աշխատանքը կարող է լինել շարունակական, ինչպես մեր, այնպես էլ այլ ուսումնասիրողների կողմից:

Այսպես, XIX դարի երկրորդ կեսերից մեծ հետաքրքրություն է առաջանում հազարամյակների ընթացքում ծնված, պահպանված ու փոխանցված, բայց և մեծամասամբ անուշադրության մատնված ժողովրդական երգաստեղծության գոհարների նկատմամբ: Հայ առաջավոր մտավորականներին սկսում է մտահոգել ժողովրդական ստեղծագործության բազմազան նմուշների հավաքման, գրառման և ուսումնասիրման խնդիրները: Ի վերջո, հրապարակ են գալիս ձեռագիր և տպագիր երգարաններ, ավելի ուշ՝ ձայնագրյալ (կամ՝ նոտագրված) ժողովածուներ:

Բնագավառի դասականներ՝ Կոմիտասից և նրա ժամանակակիցներից հետո լիարժեքորեն կամ մասնակիորեն երաժշտական բանահավաքչական գործին են լծվել երաժշտագետներ Սյիրիդյան Մելիքյանը, Քրիստափոր Քուչնարյանը, Միհրան Թումանյանը, Հակոբ Հարությունյանը, Վարդան Սամվելյանը, Վաղարշակ Սրվանձոյանը, Մուշեղ Աղայանը, Արամ Քոչարյանը, Մաշա Օգանեզաշվիլին, Ռոբերտ Աթայանը, Նիկողոս Թահմիզյանը, Մաթևոս Մուրադյանը, Մարգարիտ Բրուտյանը, Կարինե Խուդաբաշյանը, Արաքսի Սարյանը, Ալինա Փահլևանյանը, Մանուկ Մանուկյանը, Զավեն Թագակչյանը, Աշոտ Մուրադյանը, Հռիփսիմե Պիկիսյանը, Հասմիկ Էլոյանը, Անահիտ Բաղդասարյանը, Անահիտ Կիրակոսյանը, Արթուր Շահնազարյանը, Նունե Աթանասյանը, Անահիտ Գևորգյանը, Մարգարիտ Սարգսյանը, խմբավար Թաթուլ Ալթունյանը, կոմպոզիտորներ Արգաս Ոսկանյանը, Խաչատուր Մարտիրոսյանը, բանագետներ Արուսյակ Մահակյանը, Ռոտմիկ Հարոյանը, երգիչ Շարա Տայանը, երգիչ-աշուղագետ Թովմաս Պողոսյանը, աշուղագետ

Էլինար Շահենը և շատ ուրիշներ, որոնցից շատերն, այսօր արդեն, ժողովածու կազմելու մեծ փորձ ունեն: Ֆոլկլորագիտության ամբիոնում գրվել են նաև դիպլոմային աշխատանքներ, որոնք ոչ միայն տարբեր տեսանկյուններից են անդրադարձել ժողովրդական երգ ու նվագի գրառման, պահպանման, ուսումնասիրման ու հրատարակման խնդիրներին, ավելին՝ աշխատանքին կից նոտային հավելվածներից մի քանիսը հետազայում դարձել են ձայնագրյալ ժողովածու և հրատարակվել:

Բսկ թե ի՞նչ կարևոր դեր են խաղացել բազմաթիվ երգարաններն ու ժողովածուները ժողովրդի կյանքում ու կենցաղում, գիտա-մշակութային ասպարեզում, և թե ի՞նչ որակական փոփոխություններ են տեղի ունեցել դրանց զարգացման ճանապարհին՝ սրանք ուսումնասիրման կարոտ հարցեր են, որոնց մասնակիորեն կփորձենք պատասխանել:

Գաղտնիք չէ, որ ժողովրդական երգն ու նվագը դարեր շարունակ գոյատևել են բացառապես բանավոր ավանդույթի կանոններով: Հետևաբար, բանավոր երգը ժամանակի ընթացքում կարող էր մոռացվել, կորչել, կամ փոփոխություններ կրել՝ տալով բազմաթիվ տարբերակներ: Այս իմաստով, ժողովրդական երգ ու նվագի գրառումն ու նոտագրումը, հետազայում նաև ձայնագրյալ ժողովածուների կազմումն ու հրատարակումը որոշ չափով կասեցրել է երգային նմուշների հնարավոր կորուստները, թեև դրանից հետո էլ ժողովրդական երգն իր կենցաղում շարունակել է ապրել բանավոր ավանդույթով:

Բարեբախտաբար, կյանքի պայմանների փոփոխությունների հետ մեկտեղ, արժևորվել է երգի կարևոր դերը ժողովրդի կյանքում և մեծացել ժողովրդական երգերի ժողովածուների ու երգարանների գործնական նշանակությունը: Այսպես՝ մի կողմից դրանք պահպանում են ժողովրդի պատկերավոր մտածելակերպը, գենետիկ հիշողությունն ու ազգային երաժշտայելզվի առանձնահատկությունների բնագրային զգացողությունը, սերունդներին փոխանցելու անհրաժեշտության գիտակցումը: Մյուս կողմից՝ այդ հարստությունը, դուրս գալով ծիսակարգային միջավայրից ու նեղ անձնական ընտանեկան սահմաններից դեպի հասարակական և մշակութային միջավայր՝ իր արտահայտումն է գտնում ժանրային, թեմատիկ, ձևակառուցման, ինչպես նաև՝ լեզվական կամ բարբառային բազմազանության մեջ:

Ելույթի պատմական ուսումնասիրությունը ի հայտ է բերում բնագավառի անցած ուղու և զարգացման ընթացքը, ընդգրկելով XIX դարի երկրորդ կեսից՝ Մահակ Ամատունու, Արշակ Բրուտյանի (Բրտյանի), Ստեփան Դեմուրյանի, Կոմիտասի և նրա բանահավաք սաների ու հետնորդների հրատարակումները, ընդհուպ մինչև XXI դարի մեր օրերը (ինչու չէ՝ նաև սփյուռքում հրատարակված մի շարք ժողովածուներ):

Հսկայական ուշադրության են արժանի՝ Մատենաշարի տեսքով

ա) ԳԱ Արվեստի ինստիտուտի ժողովրդական երաժշ-



Մինչև 19-րդ և 20-րդ դարերի հրատարակություններ

Publications of the late 19th and early 20th centuries

Издания конца XIX - начала XX веков



XXI դարի հրատարակություններ

Publications of the XXI century

Издания XXI века



տության բաժնի,

բ) Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիայի հայ երաժշտական ֆոլկլորագիտության ամբիոնի,

գ) «Մայաթ-Նովա» մշակութային միությանը կից Աշուղագիտական կենտրոնի կողմից հրատարակված ձայնագրյալ ժողովածուները:

դ) Անմասն չէ նաև Կոմիտաս թանգարան-ինստիտուտը, որի լուրջ գիտական հրատարակումների շարքում տեղ են գտել նաև թեմատիկ ձայնագրյալ ժողովածուներ:

Երգարաններ ու ժողովրդական երգերի ժողովածուներ կազմելու և հրատարակելու գործի ուսումնասիրությունը ի հայտ է բերում հետևյալ պատկերը՝ ընդգրկելով ընդհանուր և մասնակի, ինչպես նաև ժամանակի պահանջով պայմանավորված անխուսափելի գործընթացներ, որոնք կապ ունեն ժողովրդի պատմական և մշակութային կյանքի զարգացման հետ:

Ուսումնասիրելով 60 և ավելի առանձին ժողովածուներ, ավելացրած վերոհիշյալ երեք մատենաշարերի 45 ժողովածուները, որոնք միասին պարունակելով մոտ 7000 և ավելի նմուշներ, դիտարկել ենք զարգացման հետևյալ ընթացքը.

1. Ձեռագիր երգարանից անցում դեպի տպագիր երգարան,
2. Երգարանից անցում դեպի ժողովածու,
3. Ոչ ձայնագրյալ երգարանից դեպի ձայնագրյալը,
4. Հայկական նոտագրությունից դեպի եվրոպականը,
5. Հիշողությամբ կամ Լիմոնջանի նոտագրության համակարգով գրառումից դեպի տեխնիկայի կիրառում (մագնիստֆոն կամ ձայնագրող այլ սարքեր, ստուդիական ձայնագրություն և այլն),
6. Խառը ժողովածուից՝ դեպի դասակարգվածը,
7. Ժողովածուն հարստացնող օժանդակ պարզ նյութերից՝ դեպի գիտական ապարատ,
8. Լեզվի սահմանների ընդլայնում (առաջաբանի և

գիտական ապարատի թարգմանություն՝ երկու կատեղիք լեզուներով), 9. Աշխարհագրական սահմանների ճշտում,

10. Ժանրային հստակ դասակարգում,
11. Երգային տարբերակների ընդգրկում,
12. Ժողովածուի նոր տեսակ՝ մեկ երգասացից ձայնագրված նյութերից կազմված ժողովածու Հակոբ Հարությունյան «Մանյակ», «Հայրենի երգեր Հայրիկ Մուրադյանի ձայնից» (Վասպուրական-Շատախ), Մատուր Զարգարյան (Պարսկահայք), Արմենուհի Գևոնյան (Տարոն), «Հիշողության ծալքերից» - Լենա Գևորգյան (Ապարան), «Թանկարժեք ավանդ» (Բշխան Գարապետյան, Մուշ Ալաշկերտ), և այլն,

13. Բանագիտական կամ ազգագրական ուսումնասիրություն-գիրք, որն ունի հավելվածի տեսքով նոտային նմուշներ («Բասենի պարերգեր», «Ձայն Համալենական»),

14. Որոշ ժողովածուներում երգային տեքստերի ռուսերեն թարգմանություն: «Հայրենական Մեծ պատերազմը երգերում» (թարգմանությունը՝ Ալինա Փահլևանյանի), «Ռամկական մրմունջներ» (հատոր II, թարգմանիչներ Թամար Դեմուրյան և Ալինա Փահլևանյան),

15. Խոսասյուրիկի՝ լազերային ձայնասկավառակի առկայություն (Բալու, Ակն),

16. Առանձին ժողովածուից դեպի մատենաշար (սերիալ տպագրություն),

17. Պարզունակ տպագրությունից դեպի որակական և տեխնիկական բարձր մակարդակի տպագրություն: Բացի այդ, ժողովրդական երգերի ձայնագրյալ ժողովածուները հանդիսանում են գիտական տեղեկատվության աղբյուր: Այստեղ հարկ է առանձնահատուկ նշել նոր որակի վերածանությունների՝ նոտագրման սկզբունքների ու կարևոր նշանների օգտագործման մասին, որոնք մշակվել են կոնսերվատորիայի պրոֆեսոր Ալինա Փահլևանյանի կողմից:

Այսպես՝

ա) երգի ստեղծման ժամանակը, ծննդավայրը, միգրացիան և գոյատևման հետագա միջավայրը,

բ) ազգագրական տեղեկություններ՝ ծեսեր, սովորույթներ,

գ) պատմական ստույգ փաստեր (տարեթիվ, երկրաշարժ, պատերազմ, կոնկրետ պատմական անձ կամ հերոս և այլն),

դ) բարբառային կամ օտար բառերի բառարաններ (իբրև նորույթ՝ նաև բարբառային դարձվածքների առանձին բառարան, որը մեզանում ներմուծել է բանագետ Արուսյակ Սահակյանը),

ե) տվյալներ երգասացների մասին,

զ) տվյալներ բանահավաք-մասնագետի կենսագործունեության մասին,

է) արխիվային և այլ օժանդակ նյութեր, անհայտ նկարներ, քարտեզներ:

Երգարաններում և Չայնագրյալ ժողովածուներում ընդգրկված հարուստ նյութը հսկայական աղբյուր է հանդիսացել նաև XIX դարավերջի և XX - XXI դարերի հայ կոմպոզիտորական մտքի համար: Կոմիտասի, Զ. Կարա-Մուրզայի, Մ. Եկմայանի, Ա. Տիգրանյանի, Ա. Խաչատրյանի, Ա. Հարությունյանի, Գ. Եղիազարյանի, Ղ. Սարյանի, Է. Միրզոյանի, Է. Հովհաննիսյանի, Ս. Աղաջանյանի, Խ. Ավետիսյանի, Ա. Ոսկանյանի, Ռ. Ալթունյանի, Ե. Երկանյանի, Խ. Մարտիրոսյանի, Զ. Ասատրյանի

և նրանց հետնորդների շատ ստեղծագործություններ փաստում են հայ գեղջուկ երաժշտության հիմնարար ազդեցությունը՝ ազգային մասնագիտական դպրոցի ձևավորման կարևոր գործում:

Հայ ժողովրդական երգը ժամանակի ընթացքում բարձրացել է մասնագիտական համերգային բեմահարթակ (հասկանալիորեն՝ ոչ իր նախաստեղծ վիճակով) և դարձել հասարակության լայն խավերի գեղարվեստական դաստիարակության կարևոր միջոցներից մեկը՝ նաև հենց այդ ժողովածուների շնորհիվ: Մի շարք ժողովածուներից կենդանի կատարումներով նմուշներ ձայնագրվել են լազերային ձայնասկավառակների վրա (CD):

Այսպիսով, ամփոփելով վերոշարադրյալը, հարկ է նշել, որ սկսած 1856 թվականից, երբ լույս տեսավ առաջինը մեզանում համարվող «Ազգային հայոց երգարանը», ժողովածուները հրատարակչական հսկայական փոփոխությունների են ենթարկվել՝ սկսած նյութի կամ բովանդակության քանակական և որակական հարստացումից, ձայնագրման միջոցներից, գիտական մակարդակի հասնող աշխատասիրությունից մինչև տեխնիկական բարձր որակի տպագրությունը, որը հայ ժողովրդի գրասիրության և գրատպության հանդեպ ունեցած գնահատանքի բարձր չափանիշի արտահայտումն է:

Իրոք, երևույթը հայ ֆոլկլորագիտության ասպարեզում նկատելի նվաճում է:

Հեղինակի մասին. ԱՆԱՀԻՏ ԱՐՏԱՎԱԶԴԻ ԿԻՐԱԿՈՍՅԱՆ (ծ. 1953, Երևան) Երաժշտագետ, ֆոլկլորագետ, ԵՊԿ դոցենտ, ավարտել է Երևանի Կոմիտասի անվ. պետական կոնսերվատորիայի երաժշտագիտական բաժինը: Դասավանդում է կոնսերվատորիայի Հայ երաժշտական ֆոլկլորագիտության ամբիոնում՝ «Հայ ժողովրդական երաժշտական ստեղծագործություն», «Կատարողական արվեստ», Մասնագիտական ֆոլկլորագիտության դասարան է վարում, դոցենտ: Հեղինակ է գրքերի՝ «Իրանի Սպահանի շրջանի Փերիա գավառի ժողովրդական և աշուղական երգերի ընտրանի» (ձայնագրյալ ժողովածու), «Իրազարկ» հրատ., Փասադենա (ԱՄՆ), 1996, 69 էջ: «Հովհաննես Դարբինյան – Խմբավարն ու թառահարը», Եր., Ամրոց, 2000 թ., 55 էջ: «Մարգարիտ Բրուտյան – Կենսամատենագրություն», Եր., Ամրոց գրուպ, 2007 թ., -71 էջ: «Հայ դուդուկահարներ», /«Դուդուկը», Եր. 2007, էջեր 25-59: «Արգաս Ոսկանյան – Մանկավարժը և հայ երգեցողության դպրոցը», Եր., Անահիտ. 2008 թ., - 117 էջ: «Հայկական ժողովրդական նվագարաններ» (համահեղինակ՝ Ա. Բաղդասարյան), Եր., Կոմիտաս, 2008 թ., (հայերեն, ռուսերեն, անգլերեն), էջեր 36-76, «Հայ ժողովրդական նվագարանային կատարողական արվեստ», ձեռնարկ, Եր., Ամրոց-Գրուպ, 2011 թ., -248 էջ, Народная музыка и инструменты (соавторы: К. Худабашян, А. Багдасарян). В книге "Армяне" (из серии "Народы и культуры). М.: Наука, 2012, стр. 419-437: «Հայ ժողովրդական նվագարաններ» (Ձեռնարկ դպրոցականների համար), «Ամրոց Գրուպ», Երևան, 2022: Ֆոլկլորագիտության հարցերին, գործիքագիտությանը, աշուղագիտությանը նվիրված, գրախոսական, վերլուծական, մատենագիտական և այլ բնույթի երկու տասնյակից ավելի հոդվածների հեղինակ է, որոնք հրատարակվել են տարբեր գիտական հանդեսներում և ամսագրերում ունի 50-ից ավելի հրապարակախոսական հոդվածներ մամուլում:

About the author: ANAHIT ARTAVAZD KIRAKOSYAN (born 1953, Yerevan) music ethnographer. She graduated from Yerevan Komitas State Conservatory (class of Prof. M. A. Brutyan), Associate Professor at the Department of Armenian Music Folklore Studies. She teaches Armenian Folk Music, Performing Art and conducts a class on Music Folklore. She is author of the following books: "A selection of Folk and Ashugh Songs from Feria Province, Isfahan Region, Iran" (Pasadena, USA.. 1996); "Hovhannes Darbinyan - Choirmaster and Tarist" (Yerevan, 2000); "Margarit Brutyan. Materials for Biobibliography" (Yerevan, 2007); "Armenian Duduk Players" (in Duduk Album. Yerevan, 2007); "Arzas Voskanyan and the Armenian Singing School" (Yerevan, 2008); "Armenian Folk Musical Instruments" (co-author A. Baghdasaryan. Yerevan, 2008); "Armenian Folk Music-Performing Art" (Yerevan, 2011); "Folk Music and Instruments" in "Peoples and Cultures: Armenians" (co-authors K. Khudabashyan and A.

Ֆոլկլորիստներ

Baghdasaryan. Moscow, 2011). "Armenian Folk Music Instruments" (manual for schoolchildren), "Amrots Group", Yerevan, 2022. Anahit Kirakosyan is also author of around twenty articles related to folklore studies, musical instruments, ashugh music, as well as reviews, analytical, biographical and bibliographical materials published in a number of journals, as well as more than fifty newspaper articles.

06 автор: АНАИТ АРТАВАЗДОВНА КИРАКОСЯН (род. в 1953 г., Ереван) - музыковед-фольклорист. Окончила Ереванскую государственную консерваторию им. Комитаса (класс проф. М. А. Брутян). Работает на кафедре армянской музыкальной фольклористики Ереванской государственной консерватории им. Комитаса в должности доцента. Преподает следующие дисциплины: Армянское народное музыкальное творчество, Исполнительское искусство, Специальный класс "Музыкальная фольклористика". Автор книг: "Народные и ашугские песни области Периа Исфahanского района Ирана" (Иран). Пасадена, США, 1996, - 69 с.; "Ованес Дарбинян — хормейстер и тарист", Ер., 2000, - 54 с.; "Маргарит Брутян. Материалы к биобиблиографии", Ер., 2007, - 71 с.; "Армянские дудукисты" (см. альбом "Дудук"), Ер., 2007, С. 25-59; "Арзас Восканян—педагог и армянская вокально-исполнительская школа", Ер., 2008, - 114 с.; "Армянские народные музыкальные инструменты" (соавтор - А. Багдасарян), Ер., 2008 (на арм, русск. и англ. языках), С. 36-760; "Армянское народное инструментальное исполнительское искусство", Ер., 2011, - 247 с.; Народная музыка и инструменты (соавторы К.Худабабян, А. Багдасарян), в книге "Армяне" (из серии "Народы и культуры"), М.: Наука, 2012, С. 419-437 (на рус. языке). "Армянские народные музыкальные инструменты", (пособие для школьников общеобразовательных школ), Ер., Амрой групп, 2022 (на арм. и англ. языках). Является автором около двух десятков статей, посвященных вопросам фольклористики, музыкального инструментария, ашугской музыки; рецензий, аналитических, биографических, библиографических материалов, изданных в разных научных журналах, а также свыше 50-ти газетных статей.